

## ԿԱՐԾԻՔ

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Աննա Աշոտի Կովալյովայի ԺԳ.00.02 – Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (Ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Շարժումների պլաստիկա. դրսևորման առանձնահատկությունները և կատարելագործման մեթոդիկան ֆիզիկական դաստիարակության գործընթացում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Աննա Կովալյովայի ատենախոսական աշխատանքը նվիրված է շարժումների պլաստիկայի տարբեր դրսևորումների ուսումնասիրությանը և դրանց կատարելագործման մեթոդիկայի մշակմանը ֆիզիկական կուլտուրայի դասերին՝ 7-8 րդ դասարաններում:

Շարժումների պլաստիկան, որպես կոորդինացիոն դրսևորում հանդիսանում է շարժողական ընդունակությունների բարդ համակարգ, որը իր մեջ ներառում է այնպիսի շարժողական ընդունակություններ ինչպես ընդհանուր կոորդինացիա, մկանների ռացիոնալ թուլացում և կծկում, մկանային ուժի տարբերակում, ճկունություն և այլն:

Շարժողական ընդունակությունների մշակման խնդիրները տարբեր սեռատարիքային խմբերի մոտ շարունակում է լինել արդիական: Մեր օրերում բազմաթիվ գիտական աշխատանքներ են իրականացվում նվիրված տարբեր շարժողական ընդունակությունների դրսևորմանը և դրանց կատարելագործման տարբեր մարզաձևերում: Այս տեսանկյունից շարժումների պլաստիկան համեմատաբար քիչ ուսումնասիրված կոորդինացիոն դրսևորումներից մեկն է, հաշվի առնելով, որ այն մարզիկի սպորտային վարպետության բարձր ցուցանիշ է համարվում հիմնականում գեղագիտական ուղղվածությամբ մարզաձևերում և կատարողական արվեստի ճյուղերում, որտեղ շարժումների պլաստիկան հանդիսանում սպորտային տեխնիկայի (բեմական վարպետության) կատարելագործման բաղկացուցիչ մաս՝ մարմնամարզության բոլոր ձևերը, գեղասահք, սպորտային պարեր և այլն: Այսուհանդերձ հարկ է նշել, որ շարժումների պլաստիկայի ձևավորման խնդիրները առավել քիչ են ուսումնասիրված, հանրակրթական դպրոցի ֆիզիկական կուլտուրա առարկայի դասավանդման շրջանակներում 7-8 դասարանների աշակերտների շարժումների պլաստիկայի ձևավորման մանկավարժական պայմանները: Շարժողական ընդունակությունների համալիր մշակման մեթոդները ներկայումս հանդիսանում են ֆիզիկական կուլտուրայի դասի պլանավորման առանցքային կողմերից մեկը, այս տեսանկյունից շարժումների պլաստիկայի կատարելագործման առաջարկվող մեթոդիկան կարող է նպաստել ուսումնական նյութի կազմակերպման և դասավանդման մեթոդների բարելավմանը: Հեղինակի յուրահատուկ մոտեցումը կայանում է նրանում, որ մեթոդիկայի մշակման համար ընտրվել են ֆիզիկական

կուլտուրայի դասի նյութին բնորոշ ֆիզիկական վարժություններ՝ դասի ներգրավիչ, հիմնական և եզրափակիչ մասերի համար՝ ընդհանուր զարգացնող վարժություններ, աթլետիկա, մարմնամարզություն և սպորտային խաղեր (գնդակով վարժություններ) բաժինների համար: Վերոնշյալը ընդգծում է հետազոտության արդյունքների և շարժումների պլաստիկայի կատարելագործման մեթոդիկայի գիտակիրառական նշանակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկություններից, ներկայացված է 110 համակարգչային էջերի վրա, պարունակում է 22 աղյուսակ, 22 նկար, հավելվածներ, օգտագործված գրականության ցանկը ընդգրկում է տարբեր լեզուներով 156 անուն գրական աղբյուրներ:

Ներածությունում ներկայացվել է ընտրված թեմայի արդիականության հիմնավորումը, սահմանվել են հետազոտության նպատակը, օբյեկտը և առարկան, գիտական վարկածը, ներկայացվել են հետազոտության խնդիրները, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները, ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության տեսական մասում ներկայացված է շարժումների պլաստիկա հասկացության բնորոշումը: Շարժումների պլաստիկան ներկայացված է որպես մարդու կոորդինացիոն ընդունակությունների դրսևորումներից մեկը, որպես մարզիկի տեխնիկական վարպետության բնութագրիչ: Շարժումների պլաստիկայի դրսևորումը գնահատվում է համահունչ և հակադիր շարժումների ռացիոնալ համադրությամբ, շարժումը մարմնի կամ ձեռքի ալիքով վերջացնելու կարողությամբ, մարմնի տարբեր օղակների շարժումների համաձայնեցվածությամբ և ամպլիտուդայով, դրանց միջոցով տրամադրություն, որոշակի կերպար փոխանցելու կարողությամբ: Հեղինակը փաստում է, որ վերոնշյալ բնութագրիչների մշակման համար հիմնականում խորհուրդ է տրվում կիրառել գեղագիտական ուղղվածությամբ, բարդ կոորդինացիոն մարզաձևերի միջոցները, ինչպես օրինակ՝ գեղարվեստական մարմնամարզություն, ակրոբատիկա և այլն:

Տարբեր տարիքային խմբերի մարդկանց շարժումների պլաստիկայի մշակման մեթոդների և մոտեցումների վերաբերյալ գիտամեթոդական գրականությունում առկա տվյալների վերլուծության հիմա վրա հեղինակը հիմնավորում է միջին դպրոցական տարիքի երեխաների մոտ շարժումների պլաստիկայի մշակման կարևորությունը, որպես կոորդինացիոն ընդունակություն հաշվի առնելով տարիքային զարգացման շրջանները: Շարժումների պլաստիկայի կատարելագործումը արժևորվում է նաև որպես միջին դպրոցական երեխաների շարժումների կուլտուրայի ձևավորման անհրաժեշտ բաղադրիչներից մեկը:

Ա. Կովայրովան փաստագրող մանկավարժական գիտափորձում ներգրավվել է 7-ից 8-րդ դասարանների 147 աշակերտներ, սպորտով զբաղվող և չզբաղվող 72 ուսանողներ (ՀՖԿՍՊԻ և ԵՊՀ), առողջարարական ֆիզիկական կուլտուրայով զբաղվող 35 հասուն և տարեց տարիքի կանանց, ինչը ընդգծում է ստացված տվյալների հուսալիությունը և օբյեկտիվությունը: Շարժումների պլաստիկայի տարբեր դրսևորումների գնահատման համար, ընտրվել է գիտամեթոդական գրականությամբ երաշխավորվող 11 թեստեր: Ատենախոսական աշխատանքում մշակվել և առաջարկվել է ռիթմոպլաստիկայի գնահատման նոր թեստ՝ «Օղակի պտույտ գոտկատեղին»:

Փաստագրող գիտափորձի արդյունքում հեղինակին հաջողվել է հիմնավորել, որ շարժումների պլաստիկայի դրսևորման ցուցանիշները հիմնականում կախված են բազմակողմանի շարժողական պատրաստվածությունից: Տարիքային խմբերում շարժումների պլաստիկայի տարբեր դրսևորումների ցուցանիշների միջև կորելացիոն կապերի ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է, որ այդ կապերը հիմնականում ավելի արտահայտված դրսևորվում են միայն հատուկ շարժողական փորձի առկայության դեպքում՝ պայմանավորված շարժումների տարածական բնութագրիչները կառավարելու ունակություններով: Վերոնշյալը ընդգծում է հեղինակի այն եզրահանգումը, որ շարժումների պլաստիկայի մշակումը ֆիզիկական կուլտուրայի դասերի ընթացքում հնարավոր է իրականացնել միայն ուղղորդված մանկավարժական ներգործությունների միջոցով, որը արտահայտվում է շարժումների գեղեցկության, արտիստականության և արտահայտչականության ավելի բարձր մակարդակով:

Գիտամեթոդական գրականության ուսումնասիրությունների և փաստագրող գիտափորձի արդյունքների հիման վրա հեղինակը մշակել է 7-8-րդ դասարանների աշակերտների ֆիզիկական կուլտուրայի դասերին շարժումների պլաստիկայի կատարելագործման մեթոդիկական, որը մշակելիս հեղինակը հաշվի է առել դպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակությանը ներկայացվող մեթոդական դրոյթները, ֆիզիկական զարգացման սենսիտիվ շրջանները:

Գիտափորձարարական աշխատանքների օբյեկտիվությունը և արդյունքների հուսալիությունը ապահովվել է մի շարք փորձարարական մեթոդների համադրությամբ: Ըստ այդմ մանկավարժական գիտափորձից առաջ և հետո 7-րդ (14 տղա, 16 աղջիկ) և 8-րդ (15 տղա, 14 աղջիկ) դասարաններից ձևավորված 2 փորձարարական խմբերում (ո 59) գնահատվել է շարժումների պլաստիկայի դրսևորումները, ըստ ընտրված 11 թեստավորվող ցուցանիշների: Տվյալների հավաստիությունը հաստատվել է մաթեմատիկական վիճակագրական մեթոդների օգնությամբ:

7-ից 8-րդ դասարանների ֆիզիկական կուլտուրայի դասերի ընթացքում աշակերտների շարժումների պլաստիկայի կատարելագործման մեթոդիկական Վեց ամիս տևողությամբ

մանկավարժական գիտափորձի արդյունքում դրական տեղաշարժեր են դիտվել ուսումնասիրվող բոլոր ցուցանիշներում: Կինեմատոմետրիայի՝ շարժումների տարածական բնութագրիչների կառավարման ցուցանիշներում, թեև դիտարկվել են դրական միտումներ, սակայն միայն երեք դեպքում 8-րդ դասարանի տղաների մոտ արձանագրվել է ձախ ձեռքի ցուցանիշներում ( $P < 0,05$ ): «Մարմնով ալիք» թեստի արդյունքներում առավել բարձր դրական տեղաշարժեր են արձանագրվել 7-րդ դասարանի աղջիկների ցուցանիշներում ( $P < 0,05$ ), ինչպես նաև մնացած բոլոր «ալիքների» (ձեռքով, դաստակով) ցուցանիշներում ( $P < 0,01$ ,  $P < 0,001$ ): 8-րդ դասարանի աղջիկների մոտ հավաստի դրական տեղաշարժ է դիտվել միայն «ձեռքերով ալիք» կատարելու ցուցանիշներում՝ ( $P < 0,01$ ): 7-րդ և 8-րդ դասարանների տղաների մոտ թեստավորվող «ալիքներ» կատարելու ցուցանիշներում տեղաշարժերը աննշան կամ ոչ հավաստի են եղել: Ստատիկ պլաստիկայի, ռիթմոպլաստիկայի, «գլուխկոնձի առաջ» սահուն կատարման, «ութածև քայլք օղակի վրայով՝ աջ, ձախ», «մկանային ուժի տարբերակման» թեստերի արդյունքները ունեցել են դրական, սակայն ոչ հավաստի տեղաշարժեր: 8-րդ դասարանի տղաների շարժումների պլաստիկայի դրսևորման թեստավորվող բոլոր ցուցանիշներում տեղաշարժերը եղել են աննշան: Աղջիկների մոտ առանձին թեստերում ցուցանիշների դրական դինամիկան առավել արտահայտված է եղել համապատասխանաբար 8-րդ և 7-րդ դասարաններում. «մարմնով ալիք»-ը՝ 0,78 և 1,31 ռիթմոպլաստիկան՝ 0,79 և 0,5, սահուն և ամբողջական կատարում՝ 0,57 և 1,18, շարժման արտահայտչականությունը՝ 0,14 և 0,25: Հետազոտության արդյունքները փաստում են, որ մանկավարժական գիտափորձը ի հայտ է բերել առավել արտահայտված դրական տեղաշարժեր, թե՛ աղջիկների, թե՛ տղաների մոտ 7-րդ դասարանում: Հաշվի առնելով շարժումների պլաստիկայի դրսևորման բարդ համակարգը՝ կախված է տարբեր շարժողական ընդունակությունների համալիր դրսևորումից, որը արտահայտվում է շարժողական գործողությունների տարածական և դինամիկ բնութագրիչների սահուն և անընդհատ արտահայտմամբ, ապա անհրաժեշտ է արժևորել արձանագրված ցուցանիշների դրական դինամիկան փորձարարական խմբերի մոտ: Հետազոտության ցուցանիշների միջև կորելյացիոն կապերի ուսումնասիրությունը բացահայտել է մարմնով ալիքի և սահուն կատարման միջև փոխկապվածությունը ( $r = 0,41-0,52$ ), ինչպես նաև «օղակի վրայով ութածև քայլքի» և «ստատիկ պլաստիկայի» միջև ( $r = 0,49-0,64$ ), «գոտկատեղին օղակի պտույտի» և «մարմնով ալիքի» միջև ( $r = 0,46-0,5$ ), ինչը հիմնավորում է շարժումների պլաստիկայի դրսևորումների փոխկապակցվածությունը պայմանավորված մանկավարժական ուղղորդված ներգործությունների ազդեցությամբ:

Կատարված եզրակացությունները լիովին ամփոփում են ատենախոսության հիմնական արդյունքները, տրվել են համապատասխան գործնական առաջարկություններ:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլվում են հեղինակի հրատարակած թվով

10 (տաս) հոդվածներում: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության հիմնական բովանդակությանը:

Ատենախոսությունը արժևորվում է իր թեմայի արդիականությամբ, գիտամեթոդական գրականության բավականին լայն և ընդգրկուն ուսումնասիրությամբ, հիմնախնդրի հստակությամբ և հետազոտման արդիական մեթոդների կիրառությամբ, ունի հստակ տրամաբանական կառուցվածք, գիտական մատչելի շարադրանք: Հեղինակին հաջողվել է լիարժեք ներկայացնել 7-8-րդ դասարաններում ֆիզիկական դաստիարակության գործընթացում շարժումների պլաստիկայի մշակման հիմնախնդրի էությունը, մշակել այդ ուղղությամբ կատարելագործման մեթոդիկա և հիմնավորել վերջինիս արդյունավետությունը:

Արժևորելով ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, այնուհանդերձ կան որոշ դիտարկումներ, որոնք պարզաբանման կարիք ունեն.

1. Թեստերի նկարագրության մեջ (էջ 39-40 ), թեստ 3-ում նշվում է՝ «գնահատման չափանիշները նույնն են» ցանկալի է, որ հեղինակը ընգծեր թե, որ թեստի հետ են համարժեք այդ գնահատման չափանիշները:
2. Փաստագրող մանկավարժական գիտափորձին ներգրավվել են երեք խումբ փորձարկվողներ՝ դպրոցականներին, ուսանողներին, հասուն և տարեց տարիքի կանանց, ինչո՞վ է պայմանավորված վերոնշյալ սեռատարիքային խմբերի ընտրությունը:
3. Ձևավորող մանկավարժական գիտափորձն իրականացվել է փորձարարական խմբի հետ առանց ստուգողական խմբի ներգրավման: Ցանկալի է, որ հեղինակը լրացուցիչ պարզաբանի փորձարարական աշխատանքների կազմակերպման այդ մոտեցումը, քանի որ ստուգողական խմբի ներգրավումը կբարձրացներ գիտափորձարարական տվյալների օբյեկտիվությունը և հուսալիությունը՝ հաստատելով շարժումների պլաստիկայի կատարելագործման մշակված մեթոդիկայի արդյունավետությունը:
4. Հեղինակի մանկավարժական գիտափորձի արդյունքները փաստում են, որ հավաստի դրական տեղաշարժեր են դիտվել հիմնականում աղջիկների մոտ 7-րդ դասարան՝ ալիքներ աջ և ձախ դաստակներով, ալիքներ երկու դաստակները միասին, մարմնով ալիք), տղաների մոտ միայն 8-րդ դաս.՝ կինեմատոմետրիայի և 7-րդ դաս.՝ «սահուն կատարման» ցուցանիշներում: Թեև փորձարարական երկու խմբերում թեստավորված շարժումների պլաստիկայի դրսևորման բոլոր ցուցանիշներում առկա է դրական դինամիկա, այդուհանդերձ անհրաժեշտ է լրացուցիչ պարզաբանում.
  - ինչո՞վ է պայմանավորված տղաների արդյունքների առավել թույլ արտահայտվող դրական տեղաշարժերը համեմատած նույն խմբի աղջիկների ցուցանիշների հետ,

- որքանով է արդյունավետ եղել դպրոցականների շարժումների պլաստիկայի կատարելագործման մեթոդիկան հաշվի առնելով, որ թեստավորվող ցուցանիշների մեծամասնության արդյունքներում հավաստի դրական տեղաշարժեր չեն դիտվել:

5. Ձևավորող մանկավարժական գիտափորձի արդյունքները ամփոփող թիվ 16 աղյուսակի վերնագրում և բուն աղյուսակում հստակ չէ թե, որ թեստի արդյունքներն են ներկայացված: <եղինակը նշում է օրինակ՝ «արմնկահող», որը ըստ էության արմնկահողի կինեմատոմետրիայի ցուցանիշներն են:

Վերոնշյալ նկատառումները ամենևին չեն նվազեցնում ատենախոսության ընդհանուր գնահատականը, այն կատարված է պատշաճ գիտական մակարդակով և նորույթով, հետազոտության արդյունքների հավաստիությամբ, գործնական առաջարկությունների ու եզրակացությունների հիմնավորվածությամբ հաջողված աշխատանք է՝ նպատակաուղղված միջին դպրոցականների շարժումների պլաստիկայի կատարելագործման և շարժումների կուլտուրայի ձևավորման մանկավարժական խնդիրների լուծմանը ֆիզիկական դաստիարակության գործընթացում:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աննա Աշոտի Կովալյովայի «Շարժումների պլաստիկա. դրսևորման առանձնահատկությունները և կատարելագործման մեթոդիկան ֆիզիկական դաստիարակության գործընթացում» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, ունի կարևոր տեսական և կիրառական նշանակություն, իր չափանիշներով լիովին համապատասխանում է գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին և ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա և սպորտ) մասնագիտական թվանիշին, իսկ նրա հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

«Շիրակի պետական համալսարան» հիմնադրամի Սպորտի և

արվեստի ամբիոնի ասիստենտ, մանկ. գիտ. թեկնածու

Ա. Ա. Սիմոնյան

ՇՊՀ սպորտի և արվեստի ամբիոնի ասիստենտ, մանկ. գիտ. թեկնածու

Ա. Ա. Սիմոնյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ՇՊՀ-ի գիտ. քարտուղար՝



Կ. Ռ. Պետրոսյան

«13» 12 2024թ.